



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 10 ԱՊՐԻԼ, 2017

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 16

ԱՂԹՔՎ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

Պահպանէ զիս, ով Աստուած, քեզի ապաւինած եմ:  
Դուն ես Տէրս, քեզմէ զատ ուրախութիւն չունիմ:  
Կ'օրհնաբանեմ Տէրը, որ իր խորհուրդով կ'առաջնորդէ զիս,  
նոյնիսկ գիշերը զիս կը խրատէ խղճմտանիքս միջոցաւ:  
Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.  
Երբ անիկա իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել:  
Ահա թէ ինչու սիրտս ուրախ է,  
հոգիս ցնծութեան մէջ է,  
եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի,  
որովհետեւ գիտեմ թէ զիս  
մեռելներու աշխարհին մէջ պիտի չծգես,  
եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը  
փտութիւն տեսնէ:  
Կեանքի ճամբան ցոյց կու տաս ինձի.  
Ներկայութիւնդ զիս ցնծութեամբ կը լեցնէ,  
եւ քու մօտդ ըլլալը յաւէտ երջանկութիւն:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Զրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

Յիսուսի յարութիւնը

(Մտ 28.1-8, ՂԿ 24.1-12, Յճ 20.1-10)

**16** 1\*Շարաք օրը երբ անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայրը՝ Մարիամը, եւ Սողոմէն գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ \*օծեն Յիսուսի մարմինը: 2Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան:

- ՅՈ՞Վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը,- կը հարցնէին իրարու, 4որովհետեւ քարը շատ մեծ էր:

Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գլորուած էր: 5Գերեզմանէն ներս մտան եւ ներմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր, եւ սարսափեցան: 6Երիտասարդը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնա՛ք, գիտե՛մ որ խաչուած \*Նագովրեցի Յիսուսը կը փնտո՛ւէք, բայց հոս չէ՛, յարութիւն առաւ: Տեսէ՛ք, զինք հոս դրած էին: 7Այժմ գացէ՛ք, ըսէ՛ք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա ինք ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլեա. հո՛ն պիտի տեսնէ՛ք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի:

Ցերք ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած ու ապշահար, եւ ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային: